

2107

241
F-13

1912

2010

LB 2001

H A P M.
2-1187a 241
P-13



† ԱՐՄԵՆ ԱԻԱԳ ԲԱԶԱՆԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
(1843—1911)

ԽՕՍՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ՔԱՐՈԶՈՒՄԾ ԿՈՒՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ
1878 թ. մեծ սյուսին.

4997

H A P M.
2-1187a

ԴԱՏԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՈՐԴՈՑ

Քրիստոսի հաւատացեալ հօտ փոքրիկ!

Անցեալ քարոզի մէջ տեսանք հայ ուսում-
նարանի ու հայ ուսուցչի խղճուկ, աննա-
խանձելի վիճակը, այժմ գնանք հայ գեր-
դաստունը: Մտէք հայ ընտանիքի յարկի
տակ, կանգ առէք, տեսէք, ամենայն ինչ
փոխուած է, ուր է հայ գերդաստանախ-
կին պարզ կենցաղը, համեստ յարաբերու-
թիւնը, նահապետական սովորութիւնը: Ո՞ւր
են կենակից ամուսինները զիշերուայ 11
ժամին, ուր են նրանց չափահաս որդիքը:
Նրանք միմեանցից անտեղեակ զուարճա-
նում են դուրսը. իսկ ում ինամբին են
յանձնուած այս վեցամսեայ ծծկեր ման-




44925-ա.

29320-63

Էլէկտրաւարձ տպարան «Էպոխա»
Մուգէյսկի պեր. տուն Մուրադեանի № 8

1912

Ման. Տէր Արսէնի անդրանիկ քարոզը եղել է
1874 թ. Սուրբ Ստեփաննոս Նախավկայի մասին.



կիկը, այս երկամեայ երեխան, այս հնգամեայ հրեշտակը: Նրանք յանձնուած են օտ ծծմօրը, օտարազգի դայեակի, օտարազգի ծառայի, որոնք շուրջ առած հայ տան զաւակներին զրոյց են անում: Հարցրէք երբ կը գան տանտիկինն ու պարոնը, և միշտ են այսպէս բացակայում տանից. պատասխանն է՝ գիշերուայ երկու ժամին կը վերադառնան, այդ մշտական սովորութիւնն է տանտիկնոջ և պարոնի: Այր ամուսինը չըզգիտէ՝ ուր է և ի՞նչ անելիք: Կին ամուսինը չըզգիտէ՝ ուր է իւր մարդը. ծնողները չը գիտեն՝ ուր են իրանց որդիքը, որդիքը չը գիտեն՝ ուր են իրանց ծնողները: Ահա թէ ի՞նչպէս է կերպարանափոխուած հայ նահապետական գերդաստան պարզ, համեստ կազմակերպութիւնը:

Ձեզ եմ դիմում այժմ, հայ կենակից ամուսիններ, որ կոչուած էք հաւատարիմ լինել միմեանց, խորհրդակցել իրար հետ, ձախորդ ու յաջող պարագաներում վշտակից և ուրախակից լինել մէկ մէկու, կազմել մի սուրբ ընտանիք, որովհետեւ այդպիսի ընտանիքներին են առաջ գալիս հասարակութիւն, ազգութիւն և վերջապէս մարդկութիւն: Լ'նտանիքն է դրանց հիմքը. եթէ հիմքը խախտուտ է, ապա և հիմքի վրայ կառուցած հաստատութիւնը միայն ժամա-

նակաւոր ապահովութեան է դատապարտուած: Դուք, կենակից ամուսիններ, կոչուած էք կազմելու մի սուրբ ծնողութիւն, որտեղից պիտի յառաջանան որդիքն իբրեւ ընտանիքի, հասարակութեան, ազգի և մարդկութեան զաւակներ: Դուք կոչուած էք լինելու անդրանիկ դաստիարակ ձեր սիրասուն զաւակներին. ձեր լուրջ հեղինակութեամբ կոչուած էք լինելու ձեր որդոց դաստիարակութեան հիմքը, որ ապագայում զպրօքը այն հիմքի վրայ կառուցանէ դաստիարակութեան հրաշակերտ շէնքը: Եթէ դուք ձեր կոչման և պարտականութեան մէջ կը դանդաղէք, կը ծուլանաք, ապա ուրեմն միտքարիչ ապագայի փոխարէն իբրեւ ժիր սուրհանդակ կը ժամանէ ընտանեկան յարկի դժբախտութիւնը: Ինչո՞ւ. — որովհետեւ զլացաք ձեր որդոցը տալ արժանաւոր դաստիարակութիւն իւր ժամանակը: Ճշմարիտ, սուրբ ազնիւ դաստիարակութիւնն է միայն փրկարար միջոցը, որով ձեր որդիք կը զօրանան, կը զարգանան, կ'աճեն, կը բարգաւաճեն և ինչպէս նորատունկ ձիթենու շուրջ սեղանիդ բոլորքը կը խաղան: Բայց ի՞նչպէս ձեռ բերենք այդ ճշմարիտ դաստիարակութիւնը: Ահա խնդիր, որ մնում է մեզ լուծել:

Ճշմարիտ դաստիարակութիւն ձեռ բե-

րելու համար, հարկաւոր է կատարել հետեալ 6 պարտականութիւնները՝ կրօն, բնաւորութիւն, վարք, հեղինակութիւն, խրատ և զգացմունք:

Որդեսէր ծնողներ, իհարկէ դուք կը կամենայիք, որ ձեր որդիք երջանիկ կեանք և երջանիկ վախճան ունենային: Շատ գեղեցիկ ցանկութիւն է, այդպէս էլ պիտի լինի, միայն ես չըզիտեմ, թէ դուք երջանկութիւն ասելով ի՞նչ էք հասկանում. գուցէ թէ հարստութիւն, անկարօտ կեանք, հաւապազ ուրախ լինել, ընդարձակ բարեկամութիւն, ճոխ սեղան, գեղեցիկ կահաւորութեամբ բնակարան, շքեղ ապարանք և ուրիշ այսպիսի բաներ: Իսկ ես այդպէս չեմ հասկանում. ես հասկանում եմ, որ երջանիկ մարդը նա է, որ ժանտ ու ամբարիշտ անձանց խորհրդին չի հետևում և աստուածային օրէնքն ընտրում է իբրեւ ուղղորդ իւր կամքի: Եւ որպէս զի տուած լինէք ձեր որդոց ճշմարիտ դաստիարակութիւն, որ է իսկական երջանկութիւնը, պարտական էք ամենից առաջ զարթեցնել ձեր որդոց սրտերում կրօնական զգացմունք: Երբ ձեր մանկիկը կսկսէ խօսել և լսածին պատասխանել, գիտացէք, որ նրա ամբողջ հոգեկան և մարմնական աշխարհը հետաքրքրութեան, հարցասիրութեան մէջ եւ է գալիս.

օգտուեցէք այդ հարցասիրութիւնից. անպատասխան մի թողէք մանուկի հարցերը. պատասխանեցէք նրա հարցմունքներին, որքան կարելի է կոկ, ամփոփ և հասկանալի ձևով. եթէ դուք արհամարհէք մանկական պարզ և յաճախ, գուցէ, անմիտ հարցասիրութիւնը, անկասկած է, որ դուք կը մեռցնէք նրա մէջ ամենայն եռանդ և աշխոյժ միշտ նորը հարցնելու, նորը ուսումնասիրելու. այնուհետեւ զազարելով նրա հարցասիրութիւնը՝ կը զազարի և ուղեղի բարգաւաճման կանոնաւոր ընթացքը և չեն զարգանայ նրա մտաւոր թռիչքներն այն կարգով, ինչպէս հարկաւոր էր: Ել մի զարմանաք, եթէ ձեր որդին ապագայում լինի ապուշ, անընդունակ, անտարբեր, թմրած. որովհետեւ դուք մեռցրիք նրա ընդունակութեան ամբողջ աշխարհը: Ուրեմն մի դանդաղէք ձեր մանկիկների հետ երբեմն մանկանալ: Իհարկէ այդ ձեզ համար ձանձրալի է, որովհետեւ նրանց հարցերը արդէն ծանօթ են և դուք ձանձրանում էք պատասխանել նրանց: Դուք գիտէք, բայց նրանք չը գիտեն, նրանց համար նոր է. համբերութեամբ լսեցէք, երկայնամտութեամբ դաստիարակեցէք, որպէս զի ձեր ցանկացած որդիքը ունենալ ապագայում: Եւ արդ, դուք այսպէս վարուեցէք. ձեր մշտական

զբօսանքներից մասն հանեցէք երբեմն և ձեր մանկիկներին. բռնեցէք նրանց ձեռք և տարէք զբօսանելու առաւօտեան թարմ օդին, երբ արեւը նոր է ծագում և արշալուսին ճառագայթները իրանց կենդանարար անդրանիկ ողջոյնը տալիս են ամպերին ու ամպածրար լեռների գագաթներին: Տարէք զբօսանելու երեկոյեան ժամին, երբ արեւը մայր է մտնում և վերջալուսին ճառագայթները հրաժեշտի ողջոյնը տալիս են լեռների կատարներին մաղթելով համայն բնութեան կազդուրիչ ու հանգստարար քուն: Շարունակեցէք ձեր զբօսանքը մինչև այն ժամանակ, երբ գիշերուան լուսատուները-աստղեր և լուսին-կսկսեն մէկ մէկ երևալ և հետզհետէ կը ծածկեն համատարած երկինքը լուսեղէն մանրիկ ու պայծառ ճրագներով: Տարէք նրանց զբօսանելու մի պարզ և վճիտ աղբիւրի մօտ, որ սիրուն խոխով հոսում է և վազում դալար արօտների, գոյն գոյն ծաղիկների, թուփերի, ծառերի միջով և առուակ կազմելով արշաւում է դաշտերով, հովիտներով: Ուղադրութիւն դարձրէք ջրի պարզութեան վրայ, յստակ ջրի մէջ թողէք, որ ձեր մանուկը տեսնէ իւր անմեղ պատկերը: Անմեղ մանուկ, յստակ, վճիտ ու ականակիտ աղբիւր: Ի՞նչ գեղեցիկ նիւթ

կրթիչ խօսակցութեան: Յոյց տուէք վերջապէս նրանց լեռները, դաշտերի անվերջ տարածութիւնը, հսկայական անտառները, և ամեն մի հրաշալիք ցոյց տալու ժամանակ հիացէք բնութեան հիասքանչ տեսարանների վրայ. այն ձեռք տուէք ձեր զարմանքին, որ մանուկը հետաքրքրուի և ուկամայ դառնայ դէպի ձեզ իւր մանկական, պէս պէս հարցերով: Չանացէք ամեն կերպ բաւականութիւն տալ մանուկի հարցասիրութեան, միայն փոքր առ փոքր, աստիճան առ աստիճան, որպէսզի ոչ մանուկի հետաքրքրութիւնը միանուագ յագենայ և ոչ ձեր խօսակցութիւնը միանգամից լրանայ: Կրկնեցէք ձեր այս գործողութիւնը, այս զբօսանքը, այս ձևի խօսակցութիւնը մի քանի անգամ և դուք կը տեսնէք, որ շուտով, շատ շուտով կը ժամանէ ձեզ այն ցանկալի ժամը և օրը, երբ ձեր մանուկը ինքնին կըզմայլի բնութեան այդ հիասքանչ հրաշալիքով և ապա կը դառնայ դէպի ձեզ իւր հետաքրքիր հարցմունքներով, որոնցով կը ձգտի իմանալ, թէ ինչիցն է, որ արեգակը այդպէս բոլորակ է, լուսաւոր է, նրա երեսին չի կարելի նայել, աչքերը ծակում է, խիստ տաքացնում է, ցերեկն է միայն երևում. ինչո՞ւ արշալուսին ու վերջալուսին ճառագայթները շառագոյն են և ինչո՞ւ

լեռներին՝ գագաթներին են ընկնում. կը հարցնէ՝ ինչո՞ւ լուսին ու աստղերը գիշերներն են փայլում, տաքութիւնն չունենա՞նք: Ինչո՞ւ ցերեկը նրանք չըկան: Կը հարցնէ՝ ո՞րտեղից է աղբիւրի ջուրը, ինչո՞ւ այնպէս յստակ է ու վճիտ, ո՞ւր է հոսում, ինչո՞ւ համար է: Ի՞նչ են և ինչո՞ւ համար ամպը, անձրևը, ցողը, ձիւնը, դաշտերը, անտառները, սարերը, ձորերը: Ո՞վ է զրել երկնքի վրայ արևը, լուսինը, աստղերն ու ամպերը: Ո՞վ է շինել սարերը, ձորերը, դաշտերը. ո՞վ է տնկել անտառի ծառերը, ո՞վ է ցանել դաշտերում, հովիտներում այնքան բազմազան և բիւրագոյն ծաղիկները: Եւ երբ այս և այսպիսի հարցմունքներ կարկուտի նման կըթափուեն ձեզ վրայ ձեր մանուկի կողմից, չը սարսափէք, չը վախենաք և չը փախչէք, այլ ուրախացէք, որ հարցասէր ու հետաքրքիր գաւակ ունէք. օգուտ քաղեցէք, ժամանակը հասել է, արդէն հողը պատրաստ է, ցանեցէք անվեհեր, մի երկմըտէք, վստահ եղէք, վստահութիւնը գործի յաջողութեան կէսն է: Ձեր ցանելու սերմերը պիտի համապատասխան լինեն մանուկի հարցմունքներին, ուրեմն ձեր սերմը պիտի լինի կրօնականը: Ահա զիպոյ ժամ, ահա յարմար առիթ, զարթեցրէք ձեր մանուկի աղբիւրի պէս վճիտ, աստղի պէս

պայծառ սրտի մէջ կրօնի վճիտ ու պարզ զգացմունքը. սովորեցրէք վերջապէս, որ այդ բոլոր հրաշալիքը և բարիքը պարգեւել է մեզ մեր բարի Հայրը: Որի անունն է Աստուած, նա այն վերին, աստեղազարդ և հրաշալի երկնքումն է. նա ամեն բան գիտէ, ամեն բան տեսնում է և լսում է. որովհետեւ նա ամեն տեղ է. քո հայրիկին ու մայրիկին էլ նա է տուել քեզ, որ քեզ մեծացնեն, կերակրեն, հագցնեն և իւր սուրբ անունը և գործերը սորվեցնեն: Ահա այս բոլոր սիրուն բաները, որ դու տեսար, մեր մեծ Հայր Աստուածն է շինել մեզ համար: Ա՛խ, որքան բարի է նա, որքան սիրում է մեզ, միթէ կարող ենք նրա սիրածի կիսի չափ նրան սիրել:

Այստեղ մանուկը գուցէ հարցնի պատճառը. աշխատեցէք բաւարար պատասխան տալ նրան: Կրկնեցէք. այս ձևով ձեր զբօսանքները ու խօսակցութիւնները երբեմնապէս, և մի գեղեցիկ օր, մի շաբաթ երեկոյ և մի կիւրակէ օր տարէք նրան եկեղեցի: Բացատրեցէք, որ դա է այն մեծ Հօր տունը, այդտեղ պիտի մենք նրան խնդրենք, աղօթենք և փառք տանք, շուտ շուտ պիտի գանք այստեղ, որ նա մեզ աւելի սիրէ: Եկեղեցուց դուրս գալիս կանգնած աղքատներին տուէք ողորմութիւն և մա-

տուկի հարցին տուէք զգուշաւոր պատաս-
խան կրթիչ բովանդակութեամբ: Երբ տուն
կը հասնէք և կը նստէք ճաշի, կանգնած
աղօթեցէք և ապա նստէք, թող մանուկը
տեսնի, որ օրը կիրակի է, Աստուծոյ և
նրա աղքատների օրն է: Աղքատ և թշուառ
ղրացիներին կերակրի բաժին ուղարկեցէք,
թող տեսնի մանուկը: Եւ միշտ ձեր այս-
պիսի ցոյցերի դէմ արած մանուկի հարցե-
րին լրացուցիչ պատասխան տուէք, որ պա-
րարուի նրա հոգին կրօնական զգացմուն-
քով և աստուածային սիրով: Եթէ տեսնէք,
որ մանուկը հարցեր չէ տալիս ձեզ, դուք
աշխատեցէք, որ ձեր հետաքրքիր ձեռք
կազմակերպած զրուցատրութեամբ նրան
սպասելի հարցերին մօտեցնէք:

Այսպիսով դուք կատարած կը լինէք
ձեր պարտականութեան առաջին յօդուածը,
որ է Կրօն:

Հոգեւոյս Տէր Արսէնի քարոզմատեանից նրա մահուան
քառասունքի առիթով լոյս ընծայեց Բ. Ս. Գլիր:

1912 թ. 16 յունիս.

Թիֆլիս



2107



ՀՀ Ազգային գրադարան



NL0028982

2-1187d